



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի մարտի 12-ին

ք.Երևանում

ուսումնասիրելով Պետրոս Գեղամի Սահակյանի վերաբերյալ թիվ ԵԱՆԳ/0003/01/18 քրեական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 22-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հունվարի 11-ին Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 20125911 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Պետրոս Գեղամի Սահակյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որին շնորհվել է ԵԱՆԳ/0003/01/18 համարը:

2. 2018 թվականի հունվարի 22-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է դատավոր Ա.Վարդապետյանի վարույթ:

3. 2020 թվականի հունվարի 17-ին, դատավոր Ա.Վարդապետյանի լիազորությունները դադարեցվելու հիմքով, քրեական գործը մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանին:

4. 2020 թվականի հունվարի 22-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է դատավոր Ա.Գաբրիելյանի վարույթ և նույն թվականի փետրվարի 13-ին նշանակվել դատական քննության:

5. 2021 թվականի փետրվարի 8-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանի կողմից որոշում է կայացվել քրեական գործը տարածքային ընդդատության կարգով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

6. 2021 թվականի փետրվարի 18-ին թիվ ԵԱՆԴ/0003/01/18 քրեական գործը ստացվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և մակագրվել դատավոր Գ.Մարգարյանին:

7. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Մարգարյան), 2021 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ, գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար, դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

8. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի մարտի 5-ին:

Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

9. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Քրեական գործում առկա նյութերի հետազոտությունից պարզվեց, որ գործը դատարան ուղարկելիս թեև պահպանվել են քրեական գործի տարածքային ընդդատության կանոնները, սակայն գործով դատակոչված 140 դատավարության մասնակիցներից 118-ը ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի բնակիչներ են, որոնք չնայած դատարանի ծանուցման, դատարան գալու հնարավորության բացակայության պարճառարանություններով դատարան չեն ներկայանում: (...)

(...) 08.02.2021թ. դատական նիստում, ինչպես ամբաստանյալ Պ.Սահակյանը, այնպես էլ մեղադրող-դատախազ Ա.Մարգարյանը, պաշտպան Էդ.Աղաջանյանը չառարկեցին, որպեսզի քրեական գործը հանձնվի ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, նախընտրելի կլինի Արթվյան քաղաքի նախալայրի ընդդատությանը, որպեսզի հնարավոր

լինի սպահովել դադարավարության մեծամասնությունը կազմող մասնակիցների մասնակցությունը դադարակալան նիստին: (...)»¹:

10. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 08-ի որոշման և դադարակալան նիստի արձանագրության ուսումնասիրությունից երևում է, որ դատարանի կողմից 140 (հարյուր քառասուն) վկաներից ծանուցվել են ընդհամենը 6 (վեցը), որոնցից երկուսը ներկայացել են դադարակալան նիստին, իսկ մնացածը պատշաճ ծանուցված չլինելով չեն ներկայացել: Դատարանը փաստում է, որ գործում բացակայում է նշված 6 (վեցը) վկաների կամ առհասարակ գործով անցնող վկաների կողմից դատարան ներկայանալու անհնարինության վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործով անցնող 140 վկաներից ծանուցել է միայն 6-ին և նրանցից 4-ի չներկայանալու հանգամանքով պայմանավորված գրել է, որ առկա է գործով անցնող վկաների դատարան ներկայանալու անհնարինություն: Դատարանը գրնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի կատարվել օրենքով սահմանված բավարար գործողություններ վկաներին դատարան ներկայացնելու ուղղությամբ՝ մասնավորապես, կարելի էր ծանուցել ոչ թե 6 (վեցը) վկայի, այլ 20 (քսան) վկայի, այն պայմաններում, եթե մրավախություն կար, որ վկաները չեն ներկայանալու, կամ առկա էր ներկայանալու անհնարինություն, որպիսի հանգամանքներ առկա չեն գործի նյութերում: Ինչպես նաև, դատարանը կարող էր պատշաճ ծանուցված և դատարան չներկայացած վկաների վերաբերյալ բերման ենթարկելու մասին որոշում կայացնել, որպիսի գործողություն դատարանի կողմից չի կատարվել: Դատարանի կողմից, որևէ ճանապարհով չի պարզվել չներկայացած վկաների գրնվելու վայրը, նրանց դատարան չներկայանալու պատճառները, հնարավոր է հարգելի պատճառով չեն ներկայացել դադարակալան նիստին:

Բացի այդ, ուսումնասիրելով դադարակալան նիստի կրիչը, լսելով կողմերի դիրքորոշումը պարզվում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դադարավոր Ա.Գաբրիելյանը, դեռևս գործով առաջին՝ 25.01.2020 թվականին կայացած

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 17, թերթ 3:

դատարանն նկատելով, որ քրեական գործը ընդդատության ուղարկելու հարցն, այն պայմաններում, երբ պարզաճ ծանուցված 3 վկաներից 2-ը ներկայացել են դատարան և հարցաքննվել են, որպիսի հանգամանքը դատարանին հիմք է տալիս գալու եզրահանգման, որ չի ստուգվել վկաների դատարան ներկայանալու անհնարինության փաստարկվածությունը: Ինչպես նաև, գործով մեղադրող Ա.Սարգսյանը դատարանն նկատելով ժամանակ մրահոգություն է հայտնել այն մասին, որ գործը ՀՀ Կոտայքի մարզ ընդդատությամբ ուղարկելու պայմաններում պետք է քննվի միայն Արովյանի նստավայրում, հակառակ դեպքում Հրազդանի նստավայր մակագրվելու դեպքում անիրական կդառնա գործն ողջամիտ ժամկետում քննելը, իսկ Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Գաբրիելյանը հավաստիացրել է, որ հերամուր կլինի, որպեսզի գործը քննվի Արովյանի նստավայրում, որի իրավունքը կարծում էմ, որ չունեք, ինչպես նաև, նման որոշում կայացնելիս դատարանը հաշվի չի առել, որ գործերը բաշխվում են համակարգչի միջոցով, համաչափ ընտրության սկզբունքով:

Կարծում էմ, որ կողմնակի դիրքորդի մոտ այնպիսի համոզմունք չի ձևավորվի, որ փոխյալ կոնկրետ քրեական գործը քննող Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չեն ունեցել և փոխյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Ինչ վերաբերվում է ՀՀ Կոտայքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի (Եղվարդ նստավայր) կողմից գործը ողջամիտ ժամկետներում քննելու հանգամանքին, ապա ցանկանում էմ տեղեկացնել, որ Կոտայքի մարզի Գառնի գյուղից Երևան քաղաքն ավելի մոտ է, քան Եղվարդ քաղաքը, բացի այդ, ցանկանում էմ տեղեկացնել, որ Գառնի գյուղից Եղվարդ քաղաք առկա չէ ուղիղ տրանսպորտային կապ, քաղաքացիներն այդ ճանապարհը անցնում են Երևան քաղաքով, որը ավելի է դժվարացնում նրանց դատարանն նկատելուն ներկայանալը (...):²:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. թիվ ԵԱՆԴ/0003/01/18 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Պետրոս

² Տե՛ս նյութեր, հատոր 17-րդ, թերթեր 11-14:

Քեղամի Սահակյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ընդդարյա՝ է արդյոք Կուրայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանին՝ այն դեպքում, երբ գործով դատակոչված անձանց մեծամասնությունը ՀՀ Կուրայքի մարզի Գառնի համայնքի բնակիչներ են և գործով փարածքային ընդդարությունը փոխելու դեմ չի առարկել ամբասարանյալ Պ.Սահակյանը:

12. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

13.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն «օրենքի հիման վրա սրեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է, որ. «Այն երկրներում, որտեղ օրենքը կողիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապարասիան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»³:

Միննույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. «Ներպերական դատական արյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»⁴:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդարությանն այն վերապահված է օրենքով»:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին ասրյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (սյուֆեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատարանական վարույթի նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ասրյանի դատարանի դատարանական տարածքից դուրս»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին ասրյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը»:

15. Վճռաբեկ դատարանը, *Գևորգ Հարությունյանի* վերաբերյալ գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. « (...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա սրբեղծված դատարան սպահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010) 12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը):

(...)

Պատշաճ ընդդասարության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հարակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիրքորդի մուր այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ փվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և փվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայակայությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդասարության որոշման հարակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մարչելիության պատշաճ երաշխավորման համար (...)⁵:

16. Սույն որոշման 12-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է արձանագրել, որ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելը, քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերի՝ տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս բնակվելու և մեղադրյալի համաձայնության վավերապայմանների համակցությամբ, դատարանի համար ապահովում է քրեական գործը քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերի բնակության վայրի առաջին ատյանի դատարան ուղարկելու հնարավորությունը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի հունվարի 8-ի որոշմամբ նշել է, որ սույն քրեական գործով դատակոչված 140 դատավարության մասնակիցներից 118-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի բնակիչներ են, որոնք չնայած դատարանի ծանուցման, դատարան գալու հնարավորության բացակայության պատճառաբանություններով դատարան չեն ներկայանում: Բացի այդ, 2021 թվականի փետրարի 8-ի դատական նիստում, ինչպես ամբաստանյալ Պ.Սահակյանը, պաշտպան էդ.Աղաջանյանը, այնպես էլ մեղադրող Ա.Սարգսյանը, չեն առարկել, որ քրեական գործը հանձնվի ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին, նախընտրելի կլինի Աբովյան քաղաքի նստավայրի ընդդատությանը, որպեսզի հնարավոր լինի ապահովել

⁵ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գևորգ Հարությունյանի գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշումը, 15-16-րդ կետեր:

դատավարության մեծամասնությունը կազմող մասնակիցների մասնակցությունը դատական նիստին⁶,

- Կոտայքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ արձանագրել է, որ գործում բացակայում է նշված 6 (վեցը) վկաների կամ առհասարակ գործով անցնող վկաների կողմից դատարան ներկայանալու անհնարինության վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն, և դատարանի կողմից որևէ ճանապարհով չի պարզվել չներկայացած վկաների գտնվելու վայրը, նրանց դատարան չներկայանալու պատճառները և հնարավոր է, որ վերջիններս հարգելի պատճառով չեն ներկայացել դատական նիստին: Բացի այդ, 2021 թվականի հունվարի 25-ին կայացած դատական նիստի ընթացքում, մեղադրող Ա.Սարգսյանը մտահոգություն է հայտնել այն մասին, որ գործն ընդդատությամբ Կոտայքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու պայմաններում, այն պետք է քննվի միայն Աբովյանի նստավայրում, իսկ Հրազդանի նստավայր մակագրվելու դեպքում, անիրական կդառնա գործն ողջամիտ ժամկետում քննելը:

Միաժամանակ, դատարանը փաստել է, որ Կոտայքի մարզի Գառնի գյուղից Երևան քաղաքն ավելի մոտ է, քան Եղվարդ քաղաքը և Գառնի գյուղից Եղվարդ քաղաք առկա չէ ուղիղ տրանսպորտային կապ, քաղաքացիներն այդ ճանապարհը անցնում են Երևան քաղաքով, որը ավելի է դժվարեցնում նրանց՝ դատական նիստերին ներկայանալը⁷:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ դատավարության մասնակիցների մեծամասնության՝ Կոտայքի մարզում բնակվելու և գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ ամբաստանյալի համաձայնության առկայության պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով ամրագրված իրավակարգավորումների համաձայն, քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելը եղել է Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասության շրջանակներում:

⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Միննույն ժամանակ, ընդունելի համարելով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բարձրացրած մտահոգությունները, հարկ է նկատել, որ դրանք ընդդատության մասին սույն վեճի լուծման համար կանխորոշիչ լինել չեն կարող, քանի որը վերը հիշատակված իրավանորմի համաձայն՝ որպես քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու իրավասության չափանիշ, հստակ ամրագրված են բացառապես մեղադրյալի համաձայնության և դատավարությանը մասնակցող անձանցից շատերի՝ տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս բնակվելու վավերապայմանները:

Վերոգրյալի հաշվառմամբ, գտնույմ եմ, որ թիվ ԵԱՆԴ/0003/01/18 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Պետրոս Գեղամի Սահակյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԱՆԴ/0003/01/18 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Պետրոս Գեղամի Սահակյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հ Հ Վ Ճ Ռ Ա Բ Ե Կ Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ի

Ն Ա Խ Ա Գ Ա Վ

Լ Ի Լ Ի Թ Թ Ա Դ Ե Վ Ո Ս Յ Ա Ն